«Դեմոկրատական Ռուսաստանը» ցնցված է Արցախում կատարվող անօրինություններից

Մեր թերթի հուլիսի 13-ի համարում տպագրված *«Մոսկովյան տրիբունան քննարկում է Արցախի հարցը»* (հարցազրույց «Արցախ» հայրենակցական միության վարչության եւ Հայաստանի ՌԱԿ-ի հիմնադիր խորհրդի անդամ Է. Մկրտումյանի հետ) հոդվածում ասել էինք, որ «Դեմոկրատական Ռուսաստանի» կոորդինացիոն խորհուրդը հուլիսի 4-ի նիստում նույնպես անդրադարձել է Արցախի հարցին եւ ընդունել դիմում՝ ուղղված պրեզիդենտական խորհրդին, Յոթնյակի հավաքին եւ ՍՄԿ-ի գլխավոր քարտուղարին: Ռուսաստանի ֆեդերատիվ հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր Անատոլի Շաբադը, որն այդ տեքստի համահեղինակներից է եւ խորհրդային բանակի կողմից Հայաստանի հանրապետության սահմանամերձ գոտիներում կատարած վայրագությունների ականատեսներից մեկը, *«Դեմոկրատական Ռուսաստանի մամուլի»* հուլիսի 17-ի համարում հրապարակել է այդ տեքստը, որի մեջ գրված է, թե հայերի ներկայիս ցեղասպանության ամբողջ մեղքն ընկնում է խորհրդային կառավարության վրա:

«Դեմոկրատական Ռուսաստանի» առաջնորդների ուղերձի մեջ մատնանշվում է, թե Յոթնյակի հավաքի ներկայացուցիչները պետք է լավ հասկանան, որ չնայած նախագահ Գորբաչովի բազմաթիվ հավաստիացումներին (վերջինը նա տվել է ՀՀ ԳԽ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, հուլիսի 2-ին), Արցախում հայերի ցեղասպանությունը շարունակվում է:

Ուղերձը, որի տակ ստորագրել են այնպիսի ճանաչված դեմոկրատներ, ինչպիսիք են Աֆանասեւը, Ստարովոյտովան, Մուրաշովը, գնդապետ Սմիռնովը, պրոֆեսոր Պոնոմարյովը, քահանա Գլեբ Յակունինը, պատգամավոր Շաբադի վկայությամբ ուղարկվել է նաեւ Միացյալ ազգերի կազմակերպության նախագահ Պերես դե Կուելյարին:

Սեփ. թղթ.